

# Միջնարժեք

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Մաթեմատիկական վիճակագրությունում  $x_1, x_2 \dots x_n$  չնվազող հաջորդականության միջնարժեք կոչվում է  $k$ -րդ թիվը, եթե  $n=2k+1$ , կամ  $k$ -րդ և  $k+1$ -րդ թվերի կիսագումարը, եթե  $n=2k$ : Իսկ կամայական (չտեսակավորված) հաջորդականության միջնարժեքը տեսակավորելու դեպքում մեջտեղի թիվն է, եթե հաջորդականության տարրերի քանակը կենտ է, և մեջտեղի երկու թվերի կիսագումարն է, եթե հաջորդականության տարրերի քանակը զույգ է:

**Leo2020** ռոբոտը աշակերտների իմացությունը ստուգելու համար նրանց հաղորդում է ոչ բացասական ամբողջ թվեր: Առակերտները յուրաքանչյուր թիվը ստանալուց հետո պետք է հաշվեն մինչ այդ պահը ստացված բոլոր թվերի միջնարժեքը: Վերջում նրանք Leo2020-ին պետք է տան իրենց հաշված բոլոր թվերի գումարը:

Ձեր խնդիրն է աշակերտների աշխատանքները ստուգելու համար գրել ծրագիր, որը հաշվում է տրված հաջորդականության համար այդ բոլոր միջնարժեքների գումարը:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է հաջորդականության տարրերի  $N$  քանակը: Հաջորդ տողում տրված են, իրարից մեկական բացատով անջատված,  $N$  հատ ոչ բացասական ամբողջ թվեր, որոնք չեն գերազանցում  $10^9$ -ը:

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ տրված հաջորդականության բոլոր առաջին  $i$  ( $1 \leq i \leq N$ ) անդամների միջնարժեքների գումարը:

## Օրինակ

Մուտք	Ելք
5 2 1 0 10 5	8
3 1 2 3	4.5

## Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 1 (**15 միավոր**)  $1 \leq N \leq 100$ ,
- Ենթախնդիր 2 (**20 միավոր**)  $1 \leq N \leq 1000$ ,
- Ենթախնդիր 3 (**65 միավոր**)  $1 \leq N \leq 2 \cdot 10^5$ :